ՀՐԱՆՏ ԱԼԵՔՍԱՆԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ



Հայ պատմագիտությունը ծանր կորուստ կրեց։ Կյանքի 77-րդ տարում վախճանվեց ականավոր պատմաբան, հասարակական գործիչ, գիտության հմուտ կազմակերպիչ, Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտի պատվավոր տնօրեն, ակադեմիկոս Հրանտ Ալեքսանի Ավետիսյանը։ Հ. Ավետիսյանը ծնվել է 1927 թ. մարտի 10-ին նախկին Ղարաքիլիսայում (այժմ Վանաձոր)՝ Կարսից գաղթած ավանդական հայ ընտանիքում։ 1944-ին միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո նույն թվականին ընդունվել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետ՝ իր մասնագիտությունն ընտրելով հարազատ ժողովրդի պատմությունը։ 1949-ին համալսարանն ավարտելուց հետո նա անցել է կոմերիտական, ապա 1952-ից՝ կուսակցական աշխատանքի։ Սակայն նրա հիմնական աշխատավայրը Գիտությունների ազգային ակադեմիան էր, որի հետ Հ. Ավետիսյանը կապեց իր ողջ գիտակցական կյանքը՝ 1954-ից մինչև օրս, սկզբում տարբեր պաշտոններ վարելով ԳԱԱ նախագահության համակարգում, իսկ 1979-ից ստանձնելով ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրենի պաշտոնը։ 2002 թ. մայիսին ընտրվել է ՀՀ ԳԱԱ Հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար։

Հ. Ավետիսյանի թեկնածուական (1960 թ.) և դոկտորական (1966 թ.) ատենախոսությունները վերաբերում են XIX դարի վերջի և XX դարի սկզբի Անդրկովկասի և Հայաստանի ազգային ու երիտասարդական շարժման պատմության ուսումնասիրությանը։ Հայերեն և ռուսերեն հրատարակված մի շարք մենագրություններում շրջանառության մեջ մտցնելով պատկառելի քանակությամբ արխիվային վավերագրեր՝ Հ. Ավետիսյանը ստեղծեց Անդրկովկասի երիտասարդական կազմակերպությունների կազմավորման լիակատար պատկերը՝ մոռացությունից հանելով և ընթերցող լայն հասարակությանը ծանոթացնելով հայրենանվեր գործիչների մի ողջ աստղաբույլի գործունեության մանրամասներին։

Վերջին տասնամյակում ակադեմիկոս Հ. Ավետիսյանի հետազոտության գլխավոր թեման դարձավ Հայկական հարցը։ Իրար էին հաջորդում գիտական պարբերականներում տպագրված հոդվածները 1918 թ. Մայիսյան հերոսամարտերի և դրանց մասնակիցների, Լեռնային Ղարաբաղը 1921 թ. Ադրբեջանին բռնակցելու և գիտաճանաչողական ու քաղաքական մեծ հետաքրքրություն ներկայացնող այլ իրադարձությունների մասին։

1993-ին ռուսերեն լեզվով լույս տեսավ «Բրեստ-Լիտովսկ. ինչպես բռնակցվեցին Թուրքիային Կարսը, Արդահանը, Բաթումը» աշխատությունը։ Արխիվային փաս-

տառատ նյութի քննությամբ ստեղծված այս աշխատությունը մեր պատմության մոտակա անցյալի մշուշում խնամքով քողարկված «սպիտակ բծերից» մեկի հմուտ լուսաբանումն էր: Ժամանակի իրադարձությունների հենքի վրա վերակենդանանում է խորհրդային պատվիրակության անդամների դիվա- նագիտական անկարողությունը, երբ Առաջին աշխարհամարտում պարտված Թուրքիան իր պահանջներն էր առաջադրում Խորհրդային Ռուսաստանին:

Բրեստ-Լիտովսկի բանակցությունների ուսումնասիրությունը հեղինակի առաջ բացեց նոր հորիզոններ: Գիտնականը ձեռնամուխ եղավ նոր աշխատության ստեղծման՝ «Հայկական հարցը 1918 թ.» խորագրով: Այս աշխատության մեջ Հայկական հարցը քննվեց ոչ միայն Բրեստ-Լիտովսկի, այլև Տրապիզոնի և Բաթումի բանակցությունների համատեքստում, բացահայտվեց Հայոց ազգային խորհրդի և ՀՀ պատվիրակության գործունեությունը Բեռլինում, Կ. Պոլսում, Վիեննայում, և այդ հետնախորքի վրա գնահատվեց Ռուսաստանի, Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի կառավարությունների դիրքորոշումը Հայկական հարցի նկատմամբ: Աշխատության մեջ օգտագործված են Երևանի, Մոսկվայի, Վիեննայի և Բուդապեշտի արխիվների նորահայտ և առաջին անգամ հեղինակի կողմից շրջանառության մեջ դրված մեծ թվով վավերագրեր:

1998-ին լույս տեսավ Հ. Ավետիսյանի «Հայոց ազգային միասնության հաղթանակը» մենագրությունը: Իբրև ներածություն՝ աշխատության մեջ կա մի հետաքրքիր բաժին, որտեղ ներկայացված է ռուսական բանակում ծառայած հայ բարձրաստիճան զինվորականների մի ամբողջ փաղանգ: Նրանցից շատերի անուններն առաջին անգամ են հայտնի դառնում ոչ միայն ընթերցողին, այլև գիտական շրջանակներին: Գիրքը, որտեղ մանրամասն տրված է հայկական բանակի կազմավորման գործընթացը՝ հայկական առանձին կորպուսից սկսած մինչև մայիսյան հերոսամարտերը, հայոց ազգային բանակի և Առաջին հանրապետության ծնունդը, հայրենասիրության մի յուրահատուկ դաս է մեր երիտասարդ սերնդին:

Վաստակաշատ պատմաբանը, մենագրություններից բացի, վերջին տարիներին հրատարակել էր բազմաթիվ հոդվածներ, ուշագրավ և հետաքրքիր զեկուցումներով հանդես եկել միջազգային մի շարք գիտաժողովներում, աշխարհի գիտական հասարակայնության ուշադրությունը հրավիրել մեր ժողովրդի պատմության կնճռոտ հիմնահարցերի վրա: Մայնի-Ֆրանկֆուրտում, Մադրիդում, Կալիֆորնիայում, Տուրինում, Մոսկվայում, Թբիլիսիում հնչել են Հրանտ Ավետիսյանի հետաքրքիր զեկուցումները հայ-գերմանական, հայ-իտալական, հայ-հունգարական, հայ-ռուսական, հայ-վրացական հարաբերությունների մասին՝ աշխույժ քննարկումներ և դրական արձագանքներ առաջացնելով: Այդ զեկուցումները և խիստ ուշագրավ հոդվածները («Կովկասյան տուն և համաթրքության նկրտումների հարցի շուրջը», «Կովկասյան հանրապետությունների կոնֆեդերացիայի գաղափարը 1918-1920 թթ.») լույս են տեսել առանձին ժողովածուներում. 1997-ին Մոսկվայում՝ ռուսերեն, 1998-ին Լոնդոնում՝ անգլերեն, Թբիլիսիում և Բուդապեշտում՝ դարձյալ ռուսերեն: Այդ հոդվածները գիտնական-քաղաքացի Հրանտ Ավետիսյանին բնորոշ երևույթներ են: Ամենուրեք, միջազգային գիտական բարձր ամբիոններում նա պաշտպանում էր իր ժողովրդի դատը, վեր հանում պատմական ճշմարտությունը:

Գիտահետազոտական աշխատանքին զուգահեռ, Հրանտ Ավետիսյանը կատարում էր եռանդուն մանկավարժական աշխատանք հանրապետության տարբեր բուհերում: Մեր անվանի պատմաբաններից շատերը նրան համարում են իրենց ուսուցիչը, բարձր գնահատում նրա հոգատար հայրական վերաբերմունքը երիտասարդ ուսանողների, նաև հայ ժողովրդի պատմությունը իրենց մասնագիտությունը դարձրած, գիտության մեջ առաջին քայլերն անող ասպիրանտների նկատմամբ:

Խիստ թերի կլիներ Հրանտ Ավետիսյան քաղաքացու և գիտնականի դիմապատկերը, եթե գեթ հպանցիկ չնշվեր այն պատկառելի աշխատանքը, որ նա կատարել է 1979-ից ի վեր՝ 23 տարի անընդմեջ իբրև ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն: Անցումային այս ծանր շրջանում նրա գործադրած անդուլ ջանքերի շնորհիվ պատմության ինստիտուտն ապրեց խաղաղ ստեղծագործական կյանքով, համալրվեց երիտասարդ մասնագետներով, հրատարակվեցին բազմաթիվ ուսումնասիրություններ: Ինստիտուտի կոլեկտիվը մեծ ներդրում ունեցավ հայոց պատմության դպրոցական դասագրքերի ստեղծման գործում:

Հրանտ Ավետիսյանի մեջ միահյուսվել էին Մարդը, տաղանդավոր գիտնականը, գիտության հմուտ կազմակերպիչը, Քաղաքացին, իսկական հայկական ընտանիքի հայրը: Նրա բնավորության մեջ ներդաշնակորեն համատեղվում էին ծնողներից ժառանգած կարսեցու խստությունը, համառությունը և պահանջկոտությունը՝ լոռեցու անհուն բարության և քնարական հոգու հետ: Նա մի պատկառելի գիտական կոլեկտիվի նահապետն էր, ղեկավար և պատասխանատվության իր մեծ զգացումով՝ օրինակ բոլորի համար:

Չընդհատվող աշխատանքը տարբեր արխիվներում, նոր վավերագրերի հայտնաբերումը նոր մտահղացումների և հետազոտությունների սկիզբ դարձան: Պատմաբանն աշխատանքներ էր սկսել նոր մենագրություն ստեղծելու ուղղությամբ: Ամենայն հավանականությամբ այն կկոչվեր «Հայկական հարցը 1919 թվականին»: Ավա՜ղ, գիտնականը չկարողացավ իրականություն դարձնել ինչպես այդ, այնպես էլ բազմաթիվ այլ մտահղացումներ:

Ակադեմիկոս Հրանտ Ավետիսյանի պայծառ հիշատակը միշտ վառ կմնա նրան ճանաչողների սրտերում:

«Լրաբեր հասարակական գիտությունների» հանդեսի խմբագրությունը և խմբագրական խորհուրդը նույնպես իրենց խորին ցավակցությունն են հայտնում ականավոր պատմաբան և գիտության հանրաճանաչ կազմակերպիչ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Հրանտ Ալեքսանի Ավետիսյանի մահվան առթիվ՝ վշտակցելով նրա ընտանիքին, ամբողջ գերդաստանին ու գործընկերներին:

ՀՀ ԳԱԱ նախագահություն
ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ